

Г.В. НИКОГОСЯН

**ФОРМЫ ВЫРАЖЕНИЯ ГРАММАТИЧЕСКИХ ЗНАЧЕНИЙ В РАЗНЫХ  
ЯЗЫКАХ**

Грамматические значения в разных языках могут иметь различные формы выражения, из них в настоящей работе рассматриваются аффиксация и супплетивизм в индоевропейских и финноугорских языках. В частности, рассматриваются особенности аффиксации в агглютинативных и флективных языках.

**Ключевые слова:** грамматическое значение, аффиксация, супплетивизм, индоевропейские и финноугорские языки, агглютинативные и флективные языки.

G.V. NIKOGHOSYAN

**FORMS OF EXPRESSING THE GRAMMATICAL MEANINGS IN  
DIFFERENT LANGUAGES**

Grammatical meanings in different languages may have various forms of expression, of which in the present work affixation and suppletion in Indo-European and Fenno-Ugric languages are analyzed. In particular, the peculiarities of affixation in agglutinative and flective languages are observed.

**Keywords:** grammatical meaning, affixation, suppletion, Indo-European and Fenno-Ugric languages, agglutinative and flective languages.

ՀՏԴ 82-3:821.19

L.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԽՆԴՐԱՅԻՆ ԲԱՐԴ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ  
ՀԵՏՏՍԱԼԻՆՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ**

Հայ լեզվաբանության մեջ **խնդիր ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունը** նվիրված բազմաթիվ մենագրություններ կան, որոնց հեղինակները մանրամասն ուսումնասիրել են բարդ կառույցի այդ տեսակը, վեր հանել դրանում գործող քերականական օրինաչափությունները: Կատարվում է նշված կառույցի հետազոտություն կոնկրետ ոլորտից՝ հետստալինյան շրջանի (50-60-ական թթ.) հայ արձակից բերվող օրինակներով:

**Առանցքային բաներ.** բարդ նախադասություն, խնդրային ստորադասություն, զոդվածավոր կապակցություն, շարահարական կառույց, շարադասություն, հնչերանգային ավարտվածություն:

Խնդրային ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունը՝ որպես բարդ ստորադասական նախադասության տեսակ, կրելով քերականական այդ կառույցին հատուկ **ստորադասական հարաբերության** հատկանիշը, միաժա-

մանակ ունի իրեն բնորոշող հիմնական հատկանիշ. այն է՝ **բաղադրիչ նախադասություններից մեկը մյուսին հարաբերվում է խնդրային ստորադասությամբ:**

Օրինակ. Նա խմում էր ու գլուխը թափահարելով պատմում, *թե որքան դժվար ու վրանգավոր է վարագ սպանելը* /1, 458/: Գարրիելը համոզվեց, *որ Մարգարիտը դրանով ամեն ինչ ասաց* /2, 81/: [Նա կամեցավ միջամտել դասին,] բայց վճռեց համբերությամբ սպասել, *թե ինչով էր ավարտվելու այդ զարմանալի հանդեսը* /3, 366/: Մի կարծեք, *թե բոբիկ շրջելը հենց միայն փանջանք է* /4, 92/:

Այս նախադասություններում կա մեկ ընդհանրություն. շեղատառերով ընդգծվածված բոլոր բաղադրիչները խնդրային ստորադասությամբ են հարաբերվում համապատասխան կառույցների մյուս բաղադրիչների ընդգծված բայական անդամներին՝ ցույց տալով գործողության հետ անմիջաբար կապվող, այդ գործողությանն առնչվող օբյեկտներ (իր, անձ, առարկա, երևույթ ևն): Դրանք բոլորը **խնդիր ստորադաս** կամ **խնդիր երկրորդական** կամ **խնդիր կախյալ** նախադասություններ են: Իսկ նախադասության այն բաղադրիչները, որոնց բայական անդամներին լրացնում են հիշյալ կախյալները, ստորադասական հարաբերության մեջ ունեն գերադասի գործառույթ, ուստի և կոչվում են **գերադաս** կամ **գլխավոր** նախադասություն: Խնդիր կախյալ նախադասությունների ավելի ամբողջական բնութագիրը տրվում է հետևյալ սահմանմամբ. «Խնդրային կախյալ նախադասությունները վերառված կերպով նշում են մի գործողություն, իր, իրողություն, երևույթ, որոնք իրենց այս կամ այն գործառույթով մտնում են գերադաս բաղադրիչի բայական անդամի արտահայտած գործողության ծիրի մեջ» [5, 274]:

Մտնելով բարդ ստորադասական նախադասության քերականական կարգի մեջ՝ խնդիր ստորադասականը կրում է ձևահմաստային այն բոլոր ընդհանուր հատկանիշները, որոնց միջոցով ապահովվում է բաղադրիչների շարահյուսական փոխկապվածությունը: Միաժամանակ, լինելով այդ համակարգի առանձին տեսակ, այն ունի այդ տեսակին բնորոշ առանձին քերականական հատկանիշներ:

**Խնդիր կախյալը լրացնում է գլխավորի՝ միայն բայով կամ բայական բաղադրիչով արտահայտված տարբեր անդամների:** Բայական անդամ լրացյալի շարահյուսական պաշտոնը գերադասում էական չէ, կարևորվում է դրա ձևաբանական կարգը՝ բայ կամ բայական բաղադրիչ:

Օրինակ. Ինձ զգուշացրին, *որ կապված է մի կնոջ հետ* /6, 43/: Հասկանում էք, *թե ինչ նշանակություն ունի թևավորների նոր տեսակներ ընտելացնելը* /7, 184/: Հավատում ես, *որ այդ բոլորի համար հարուցում կլինի* /8, 37/: Սակայն նա կարողանում էր զսպել իր կարոտն ու խույս տալ նրանից, *ու՛մ համար պատրաստ էր փալ մարտերում շահած իր փառքն ու կյանքը* /9, 6/:

Օրինակներում ընդգծված բառերը (զգուշացրին, հասկանում եք, հավատում ես, խույս տալ) գլխավոր նախադասության խնդրառու բայերն են: Շեղատառերով գրված կախյալ նախադասություն-բաղադրիչները կատարում են խնդրի պաշտոն, քանի որ խնդրառու բայերից կախված են այնպիսի ստորադասական հարաբերությամբ, որի արդյունքում տեսանելի են դառնում այդ բայերի գործողության հետ անմիջապես առնչվող օբյեկտները (գործողություն, երևույթ, առարկա և այլն):

Խնդրային կախյալ նախադասությունը մեծ մասամբ դառնում է գլխավորի պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի լրացում, սակայն հաճախ այն կարող է լրացնել նաև այլ անդամների, որոնք ձևաբանորեն արտահայտված են բայով կամ ունեն բայական բաղադրիչ:

Օրինակ. Այնտեղ ես տեսա, *թե դահիճներն ինչպես են խոշտանգում մեր ընկերներին* /8, 222/: Ուրեմն վստահ եք, *որ մենք ճիշտ ճանապարհով ենք գնում* /10, 175/: Վերջապես հասկանալով, *թե ում մասին է խոսքը*, չկամությամբ բացեց դուռը /11, 156/: Ձեմ սիրում, *երբ մարդիկ մեռնում են նստած* /12, 21/:

Նշված կախյալ նախադասությունները բոլորն էլ խնդիր լրացումներ են, սակայն լրացնում են գլխավորի տարբեր անդամների, որոնք, անպայման բայ են կամ բայական բաղադրիչ:

**Խնդրային ստորադասական կառույցի բաղադրիչները չունեն ո՛չ ձևային, ո՛չ իմաստային անկախություն:** Ցանկացած բարդ ստորադասական նախադասության՝ մեկ ամփոփ միտք արտահայտելն ապահովվում է ողջ կառույցի ձևաիմաստային ամբողջականության և հնչերանգային ավարտվածության շնորհիվ: Նույնը վերաբերում է խնդրային կախյալ բաղադրիչով բարդ նախադասություններին:

**Կախյալ նախադասությունների** անունն արդեն հուշում է, որ դրանք զուրկ են ձևային և իմաստային անկախությունից:

Օրինակ. Նա երևի չէր սպասում, *որ իր գաղտնիքն այդպես կհայտնվի բռլորին* /13, 360/: Դռան սեմին նստած տղամարդը մտածում էր, *որ շուտով ծանր կնստի ձմեռը, ձյուն կիջնի անտառ տանող արահեղների վրա և, ստիպված, նա օր ու գիշեր կմնա տանը* /11, 45/:

Այս նախադասությունների ձևաիմաստային ամբողջականությունն առաջին հերթին ապահովում են գերադաս բաղադրիչները, իսկ ստորադասները, չունենալով անկախություն, կատարում են միայն լրացման գործառույթ: Բարդ նախադասության մեջ գործող ստորադասական հարաբերությունը հիմնավորում է այն պատճառահետևանքային կապը, որ գոյություն ունի գերադաս և ստորադաս բաղադրիչների միջև:

Հանդիպում են խնդրային կառույցների այնպիսի տեսակներ (աննշույթ), որոնց կախյալներն առաջին հայացքից հավակնում են անկախ գործածության:

Օրինակ. Հիմա տեսնում եք՝ *ես ինձ վաշտի հրամանատարի պես եմ պահում* /10, 260/: Խնդրում եմ՝ *որոշ տեղ ուղեկցեք ինձ* /13, 517/: Ասում ես՝ *կինը փուն չթողե՞ց* /11, 197/:

Այս կառույցների գերադաս բաղադրիչներում ստորոգումը ցայտուն չէ, որի հետևանքով ստորադասական հարաբերությունը ևս կորցրել է իր հստակությունը: Այնուամենայնիվ, այդ նախադասությունների մեջ կախյալների անկախությունը թվացյալ է, քանի որ դրանք առանձին վերցրած բոլորովին էլ չեն արտահայտի այն իրական իմաստը, ինչ արտահայտել են գերադասների հետ միասին:

**Գերադաս նախադասության անկախությունը ևս ձևաիմաստային առումով հարաբերական է:** Եթե դրա խնդրառու բայը ներգործական սեռի է, և ակնկալվում է խնդիր, կամ եթե գլխավորի կազմում կա կախյալ նախադասությանը փոխարինող հարաբերյալ, ապա այդ դեպքերում գլխավորն առանց կախյալ նախադասության ձևաիմաստային առումով կիսատ ու թերի կդառնա:

Օրինակ. Պերճը նրա թավ ձայնից կռահում էր, որ նրա դիմագծերը պիտի լինեն չոր, աչքերի հայացքն անհաշտ, ծնոտը՝ պիրկ /8, 235/: Կապերտից հետո ծախեցին այն ամենը, ինչ կարելի էր ծախել, ինչի համար կարելի էր գնորդ գտնել /13, 217/:

Բերված ստորադասական կառույցներում ընդգծված գերադաս բաղադրիչներն ունեն ներգործական սեռի բայ-լրացյալներ, որոնց մեջ խնդրային պահանջն այնքան ուժգին է, որ խոչընդոտում է գերադասի անկախ գործածությանը. *կռահում էր* (ի՞նչ), *ծախեցին* (ի՞նչը): Բացի դրանից, 2-րդ նախադասության գերադասը չունի ձևային անկախություն, քանի որ նրանում առկա է *այն ամենը* հարաբերյալը:

Երբեմն գերադաս բաղադրիչի խնդրառուն (եթե մանավանդ այն չեզոք սեռի է կամ կրկնասեռ) ևս ունենում է քերականական թվացյալ անկախություն, քանի որ ավարտուն հնչերանգ ունենալու դեպքում կարող է գործածվել որպես առանձին նախադասություն, սակայն, միևնույն է, իմաստային դաշտում այն եթե չի էլ պահանջում, գոնե ենթադրում կամ ակնկալում է լրացում, հակառակ դեպքում՝ լիարժեքորեն չի արտահայտում բայական գործողության տիրույթը:

Օրինակ. Հավատում ես, որ այդ բոլորի համար հատուցում կլինի /8, 37/: Ես ձայնից ճանաչեցի, որ նա է, այն տղամարդավարի աղջիկը /10, 54/:

Քիչ չեն նաև խնդիր կախյալ բաղադրիչով այնպիսի կառույցները, որոնց գերադաս անդամի խնդրառու բայի սեռը հստակեցված չէ: Նման դեպքերում հատկապես **կարևորվում է հնչերանգային ավարտվածության գործոնը:**

Օրինակ. Գոնե ստիպված չէիր ամեն օր լսել հինայած մորուքով դերվիշի «Ես-Ալլահ»-ը և սրտատրոփ սպասել, թե ե՞րբ պիտի արվեստանոցի ճաքած առաստաղը թափվի գլխիդ /8, 31/: Հույս էլ չկա, թե որևէ բան կուտենք /10, 106/: Քանի՞ տարի առաջ էր նա վերջին անգամ տեսել իր քաղաքի երեկոն, ո՛վ գիտե /12, 5/:

Եթե փորձենք նշված գերադաս բաղադրիչները գործածել ստորադասից առանձին և դարձնել հնչերանգով ավարտուն, ապա կփոխվի նաև իմաստային դաշտը: Մի բան է՝ «Հույս էլ չկա», բոլորովին այլ բան՝ «Հույս էլ չկա, թե որևէ բան կուտենք»:

**Կախյալ նախադասության մեջ լրացման կարգավիճակի առաջնահերթությունը զբաղեցնում է ստորոգյալը:** Խնդրային ստորադասությամբ կառուցում կախյալ բաղադրիչը թեև չունի առանձին հնչերանգային ավարտվածություն, բայց պահպանում է իր՝ նախադասության հատկանիշը հաստատող ամենակարևոր քերականական կարգերից մեկը՝ **ստորոգումը**, որն էլ առաջնահերթորեն ապահովում է այդ նախադասություն–բաղադրիչի՝ գերադասին լրացում դառնալու կարգավիճակը:

Օրինակ՝ Ես տեսա, թե ինչպես *սպանեցին* եղբորս /8, 222/: Ես միշտ համոզված եմ եղել, որ դուք մեծ *սպազա ունեք* /14, 198/: Մենք հավատում ենք, որ հրկիզող շիշը իրոք հզոր *զենք է* /10, 73/: Ես նույնիսկ համաձայն չեմ, թե դա *կլինի* նոր սեր /12, 45/: Նրան հաճելի էր *տեսնել*, որ մարդիկ *չեն կարողանում անտարբեր մնալ* իր գեղեցկության հանդեպ. կանայք չարությամբ էին նայում, տղամարդիկ՝ համարյա երկյուղածությամբ /15, 421/:

Եթե փորձենք նշված բարդ նախադասություններն այնպես համառոտել, որ դրանց ձևային հենքը պահպանվի, ապա կհամոզվենք, որ դրա համար նախ պետք է մնա գերադասի լրացյալը, ապա՝ ստորադասի **ստորոգյալը**. *տեսա, թե ինչպես սպանեցին* (տեսա **սպանելը** [կամ սպանելու ձևը]). *համոզված եմ եղել, որ սպազա ունեք* (համոզված եմ եղել [ձեր] **սպազա ունենալու մեջ**). *Հավատում ենք, որ հզոր զենք է* (հավատում ենք հզոր **զենք լինելուն**). *համաձայն չեմ, թե կլինի* (համաձայն չեմ **լինելուն**). *տեսնել, որ չեն կարողանում անտարբեր մնալ, չարությամբ էին նայում* (տեսնել **անտարբեր մնալ** չկարողանալը, չարությամբ **նայելը**): Այս փոխակերպումներն ապացուցում են, որ կախյալ նախադասության ստորոգյալն ինքն է կատարում լրացման քերականական կարգի հիմնական գործառույթը, իսկ մնացած անդամները, նույնիսկ ենթական, ստորոգյալի միջոցով են լրացնում գերադաս նախադասությանը:

**Զոդվածավոր կապակցությունների շարադասությունը** ճկուն է. դրանց համար առավելապես բնորոշ է *կամընտրի* շարադասությունը, որի շնորհիվ

բաղադրիչների դիրքային փոփոխություններով կարելի է ստեղծել ոճական տարբեր երանգավորումներ:

Օրինակ. **Վերջադաս կառույցներ:** Նայում էի շուրջս ու չէի հասկանում, *թե ինչ խաղ էր սարքել լեռնային բնությունը* /11, 192/: Ցանկանում եմ, որ դու մոռանաս այն, *ինչ ինձ ասացիր* /16, 70/: Ես հավատացած եմ, որ ձեր բարեկամը ուրիշ նյութ կգտնի խոսակցության համար /14, 87/: **Միջադաս կառույցներ:** Այն, *ինչ տեսնում էի*, չէի ըմբռնում /16, 117/: Տեսնելով, որ տառիս տարան *Օհանջանի տուն*, վազեցի այնտեղ /17, 11/: **Առաջադաս կառույցներ:** *Ինչ կուզես՝* արա /13, 217/: *Ինչ ուզում է*, թող ասի կոմիսարը /10, 219/:

**Շարահարական կառույցների շարադասությունն** ավելի կայուն է, և դրանց բաղադրիչների տեղաշարժը երբեմն կարող է առաջացնել «իմաստային որոշակի փոփոխություններ» [18, 610]: Շարահարական կառույցները մեծ մասամբ ունենում են կախյալ նախադասության *վերջադաս* շարադասություն, սակայն ոճական երանգավորման թելադրանքով հանդիպում են նաև *առաջադաս* և *միջադաս* կապակցություններ [19, 226]:

Օրինակ. **Վերջադաս կառույցներ.** Հաճախ չէր կարողանում որոշել՝ ով ուր է տանում իր շուշանները /12, 7/: Արմենակը չգիտեր՝ *ինչպես ծերունուն հաշտեցներ նրա հետ, ինչպես բացատրեր իր հետ պատահածը* /11, 182/: Հասկանում եմ, *նրանք էլ են վախենում* /10, 55/: **Առաջադաս կառույցներ.** *Կայարանից ձախ սպիտակ տներ կան*, հիշում ես /10, 165/: *Ի՞նչ էր մտածում*, չէի կարողանում հասկանալ, միայն խղճում էի իմ լավ, իմ համր ընկերոջը /17, 7/: **Միջադաս կառույցներ.** Ո՞վ ա իմ տերը, հասնողը *ինչ ուզի* կասի /20, 153/: Լավ, այդ դեպքում դու ինձ մի շիջ գարեջուր տուր, հետո *ինչ հարկավոր է*, ես ինքս կանեմ /13, 203/:

Հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնցում գերադաս նախադասությունն ընկած է ստորադասի մեջ, տրոհում է այն կամ, այլ կերպ ասած, կախյալ բաղադրիչը «տարադաս» է:

Օրինակ. Նրա հայրը, *ասում են*, ընտիր մազադաթ էր պատրաստում /11, 138/: Պապիս մասին, *խնդրում եմ*, ոչ մի աննպաստ խոսք կամ ակնարկ /20, 383/: Հենց նա էլ, *չեմ հիշում*, թե ինչպես հանկարծ խոսք բացեց այն մասին, թե ծառի բունը որքան էլ փտի, մեռնի՝ նրա արմատից դուրս կգան նոր ճյուղեր, և մի տեսակ կշարունակվի այդ ծառի սերունդը /12, 13/:

**Եզրակացություն:** Հետստալինյան ազատական մթնոլորտում հայ գեղարվեստական խոսքը ևս ձերբազատվում է լեզվամտածողական կապանքներից: Նշված ազատականությունն առկա է նաև հիշյալ շրջանի հայ արձակույց գործածված խնդրային ստորադասությամբ բարդ նախադասություններում, որն

արտահայտվում է քերականական հատկանիշների բազմապլանայնությամբ, ճկուն շարադասությամբ և հնչերանգային ավարտվածության ինքնատիպ դրսևորումներով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Խանզադյան Ս.**, Հողը, Եր., Հայպետհրատ, 1957, 764 էջ:
2. **Սիրաս Հ.**, Արարատ, Եր., «Հայաստան», 1967, 788 էջ:
3. **Դաշտենց Խ.**, Խողեղան, Ե., Հայպետհրատ, 1956, 511 էջ:
4. **Աղավնի, Շիրակ, Ե.**, Հայպետհրատ, 1957, 516 էջ:
5. **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., Եր. համալս. հրատ., 2003, 462 էջ:
6. **Պետրոսյան Վ.**, Անավարտ դիմանկարներ, Ե., Հայպետհրատ, 1963, 308 էջ:
7. **Անանյան Վ.**, Սևանի ափին, Ե., Հայպետհրատ, 1953, 526 էջ:
8. **Ավագյան Ա.**, Վաղը, Ե., Հայպետհրատ, 1951, 236 էջ:
9. **Խանզադյան Ս.**, Մխիթար Սպարապետ, Ե., Հայպետհրատ, 1961, 844 էջ:
10. **Հովսեփյան Բ.**, Սերմնացանները չվերադարձան, Ե., Հայպետհրատ, 1962, 291 էջ:
11. **Խեչումյան Վ.**, Գիրք պանդխտության, Ե., Հայպետհրատ, 1959, 288 էջ:
12. **Պետրոսյան Վ.**, Վերջին գիշերը, Ե., Հայպետհրատ, 1959, 228 էջ:
13. **Սևունց Գ.**, Թեհրան, Գ. 2 // Երկեր 5 հատորով: Հ. 2, Ե., 1963, 599 էջ:
14. **Արամյան Ռ.**, Ռուբինյան եղբայրները, Ե., Հայպետհրատ, 1954, 256 էջ:
15. **Թաթևիկյան Շ.**, Նրա ճանապարհը: Գ. 2-րդ, Ե., Հայպետհրատ, 1958, 475 էջ:
16. **Արամյան Վ.**, Մարդու սերը, Ե., Հայպետհրատ, 1962, 180 էջ:
17. **Խանզադյան Ս.**, Ավանդատուն, Ե., «Սովետական գրող», 1986, 288 էջ:
18. Ժամանակակից հայոց լեզու: Հ.3., ՀՀ ԳԱԱ հրատ., 1976, 858 էջ:
19. **Բաղիկյան Խ.** Անշաղկապ բարդ նախադասությունների բաղադրիչների շարադասությունը // Բանբեր Եր. համալս., 1972, N3, էջ 224-242:
20. **Սահինյան Ա.**, Ծարավ // Ընտիր երկեր: Հ. 3, Ե., «Սովետական գրող», 1988, 576 էջ:

#### Л.У. АЙРАПЕТАН

#### ГРАММАТИЧЕСКИЕ СВОЙСТВА СЛОЖНЫХ СТРУКТУР В АРМЯНСКОЙ ПРОЗЕ ПОСТСТАЛИНСКОГО ПЕРИОДА

В армянском языкознании имеется множество монографий, посвященных дополнительным сложноподчиненным предложениям, авторы которых подробно изучили эту сложную структуру, выявили действующие в них грамматические закономерности. Проведено исследование данной структуры в конкретной области на примере армянской прозы постсталинского периода (50-60-х г. XX в.).

**Ключевые слова:** дополнительное сложноподчиненное предложение, подчинительная связь, союзное сочетание, бессоюзная связь, синтаксис, интонационная законченность.

L.U. HAYRAPETYAN

**THE GRAMMATICAL FEATURES OF OBJECT-COMPLEX  
STRUCTURES IN POST-STALIN PERIOD PROSE**

There are numerous monographs in linguistics concerning subordinate component of the complex sentence, where authors given have studied this type of complex structure, exposed the existing grammatical patterns. The structure is studied, using examples from the post-Stalin period (50-60s).

**Keywords:** complex sentence, object clause, asyndetic connection, syndetic connection, syntax, intonational completeness.

ՀՏԴ 82-1:821.19

**Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ**

**ԵՂԵՌՆԻ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼԻԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Դիտարկվում են Հովհաննես Փիլիկյանի եղեռնապատում պոեզիան, բանաստեղծական ազգային ինքնատիպ աշխարհը:

**Առանցքային բառեր.** Եղեռն, ազգային աղետ, հիշողություն, ազգապահպանություն, պատմական ճշմարտություն:

**Ներածություն:** Եղեռնը բազմակողմանի դրսևորում է ստանում հայ գրողների ստեղծագործություններում: Եղեռնի թեման չի սպառվում, հայը երբեք չի հաշտվում պատմական անարդարության հետ, այն միշտ թարմ է նրա հիշողության մեջ, չի հաշտվի այնքան ժամանակ, քանի որ չաշխարհի արդարամիտ մարդկությունը այն չի դատապարտել: Որքան էլ թուրքական կառավարությունը և որոշ երկրների ծախու գրչակները նենգափոխեն ցեղասպանության փաստը, այն հայերիս համար ապրած իրողություն է, արյամբ փոխանցվող ցավ: Հայ գրողները՝ օտարագիր թե հայագիր, հարազատ են մնում իրենց ազգային պատմությանն ու կենսական խնդիրներին, ձգտում ողջ աշխարհի մարդկությանը ցույց տալ բանական մարդու ուղեղում չտեղավորվող ահավոր չարիքը:

**Եղեռնի թեման Հովհաննես Փիլիկյանի պոեզիայում:** Հովհաննես Փիլիկյանն այն օտարագիր գրողներից է, որ անդրադարձել է եղեռնի թեմային: Իր բանաստեղծություններում և «1915-Հայկական մի համանվագ» պոեմում լայն համադրության մեջ փորձել է արտացոլել է եղեռնը և առաջին իսկ տողերով պարզել իր ելակետը: